

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Լասիվերդյին բուրք-քարաբների մասին.—Համբաւմականների տակտիկան.—Միջներ հաղախացիական կոիւներին վերջ դնելու.—Հայոց դպրոցների վերաբերալ կարգադրություններին:—Պետական Դաւագի իրաւասությունը:—Հայալարաններին ընտրուած ինքնավարությունը:

Անցած օգոստոս ամսում տեղի ունեցած մի քանի միաթարական անցքերը, այն է՝ հայոց եկեղեցական կալուածների և ուսումնարանների վերադարձումը, Պետական Դումայի հաստատումը, խաղաղութեան կնքումը ճապոնիայի հետ և տեղական ինքնավարութիւն նախազատրաստական աշխատանքները—առանձին ոգևորութիւն չարուցին մեղանում՝ շնորհիւ արեան, հրդեհի և անլուր բռնութիւնների այն ահուելի տեսարանների, որոնց նմանները անցել են միմեայն հայի գլխով, սկսած այն օրից, երբ թուրք-թաթարական օրդունները իրանց անվերջ ասպատակութիւնների ասպարէզ զարձրին փչացած Բիւզանդիոնի ոյժին ապաւինած Հայաստանը: Թուրք-թաթարական գաղանութիւնների ականատես հայ պատմագիր Լաստիվերդցու նկարագրութիւնները կարգավիս մարդ ակամայ համեմատում է մեր օրերը, և սոսկումով նկատում՝ որ Խլ-ըդ զարդից իվեր շատ քիչ են փոխուել «մարդադէմ գաղանների» ցեղային բնագիտները. Թուրք-թաթարների այժմեան և այն ժամանակուայ գործողութիւնների մէջ տարբերութիւնը միայն այն է, որ նետի փոխարէն այժմ դրանք հրագին են գործածում: Տուրքիլի հրոսակները ասպատակութիւններով աւերեցին Հայաստանի բոլոր գաւառները, շէն քաղաքներն, աւանները և գիւերը, սրի, հրի և թալանի մատնելով ամեն ինչ: Բոլոր աշխարհը լցուել էր գիակներով. շշէնք և անշէնք, ճանապարհը, անապատ տեղիք, քարանձաւք և առապարք, անտառախիտ մայրիք, և ափափայ վայրք»: Սպանուածների զիակները իրար վրայ թափուած ամրող շեղներ էին կազմում. թշուառ հայերից պիտանիներին նրանք գերեցին, իսկ որոնք գին չունէին այդ գաղանների աշքում, անխնայ մորթուսցին: Աւերակ դարձնելով երկիրը, ժողովելով կողոպ-

տուածը և գերիներին տանում էին բոլորը իրանց հետ։ Եւ որովհետև գերիների մէջ կային շատ կանայք, որոնք զրկում կամ ձեռքերից բռնած մանուկներ ունէին—գերիչները խլում էին մանուկներին և դէն ձգում ճանապարհի վրայ։ Եւ այնքան շատ էր այդ թշուաների թիւը, որ ամբողջ ճանապարհը ծածկուած էր մանուկների շարժուող մարմիններով։ Այդ մանուկների լացը և բռնութեամբ գերի վարուող մայրերի ողբն ու կոծը հըրծուանք էր պատճառում երկոտանի ճիւաղներին... Լասահիվերդցիից յետոյ, շատ և շատ հայ ականատեսներ եկան նոյնանման տեսարաններ տալույաջորդ դարելում։ Եւ այժմ, XX-րդ դարում, արագատիւլ մամուլի տակից են զուրս գալիս արիւն սառցնող նման բարրարառութիւնների մասին հեռագրական տեղեկութիւններ։ Եթէ Լաստրիվերդցին հրաշքով յարութիւն առնէր, նա այժմ ևս կը տեսնէր իր նկարագրած Տուղրիներին, սակայն այլ տարազով, այլ սպառազինութեամբ...

Մեր գլխին թափուած անցեալ և ներկայ փորձանքները պէտք է վերջապէս ստիպեն մեղ լուրջ մտածել մեր կացութեան, մեր ընթացքի, մեր տակտիկայի մասին։ Մենք պէտք է ճիշտ հասկանանք թէ որդնը են թուրքերի հակահայկական այս վերջին շարժման բուն պատճառները։ Շարլոն Փորմուլները և սենտիմենտալ ֆրազները պէտք է մի կողմ նետել և լաւ յիշել Գերցենի հետեալ խօսքերը։ «Доктринерство, схоластика и т.д. — это пониманье болыше, чѣмъ изувѣрство и невѣжество»... Այն, իրականութիւնից, կեանքից կտրուած դոկտրինեօրութիւնը և սխոլաստիկան՝ բան հասկանալուն աւելի են զսասում, բան չափազանց մոլեսանդրութիւնը և տգիտութիւնը...»

Մեր հարևան թուրքը մի վերացական գաղափար չէ, այլ շատ որոշ ցեղական ու կրօնական բնազդներով մի տարերային ոյժ, որ իննը դար ամենայոոի ներգործութիւնն է ունեցել մեր ճակատագրի վրայ։ Ինչպէս մենաւոր թումբ՝ հայութիւնը դարերի ընթացքում Մերձաւոր Արևելքում իր վրայ է ընդունել թուրք-թաթարական յորդ հեղեղների հարուածները, իսլամ ովկիանոսի կատաղի ալիքների բաղսումները։ Հայ ազգի կրած տանջանքները ու մարտիրոսութիւնները եղակի են մարդկային ամրող պատճութեան մէջ։ Քաղաքական սոսկալի մըրիկներ, բարբարոսութեան արհաւիրքներ են անցել նրա գլխով, արեան ճապաղիք են հոսել նրա բազմաչարչար մարմնից, արցունքների գետեր նրա աշքերից, և քանի քանի անգամ է հայը շէնացրել իր արիւն քրտինքով իսպառ աւերուած հայրենիքը։ Հայը տրորուել է, ջարդուել, արիւնաքամ եղել, թալանուել, գաղթել, սակայն այնուամենայնիւ տոկուն հայութիւնը

բնաջինջ չի եղել իր հայրենի երկրում և կիսամեռ հասել է  
XIX-րդ դարի սկզբին, երբ յոյս ունէր նա վերջապէս ազատ  
շունչ քաշել այնքան նեղութիւններից յետոյ. լուսաւորութեան,  
մարդասիրութեան դար էր, երբ «ազատութեան», եղայրու-  
թեան և հաւասարութեան» մասին էին խօսում Ֆրանսիայից  
սկսած ամեն տեղ, ուր թափանցել էր եւրոպական միտքը: Թէս  
հայութեան մեծագոյն մասը գեռ շարունակում էր մալ իսլամի  
լուծի տակ և իբրև իրաւագուրկ ույայ մատնուած էր թուրքի և  
քրդի կամայականութեան, սակայն նոյն ազգի մի ստուար մա-  
սը ապահովութիւն և հանգիստ էր գտել ոռուսաց երկլիւեան  
արծուի թևերի տակ և, բնականարար, ցանկանում էր, որ  
կեանքի, գոյքի և պատուի երաշխաւորումներ ձեռք բերուեն նաև  
իր թիւրքահպատակ եղբայրների համար: Այդ ձգտուամը շատ բնա-  
կան էին գտնում օսմանեան ըեժիմի հետ ծանօթ նաև ուու քաղա-  
ագէտները իրանց եւրոպական պաշտօնակիցների հետ միասին:  
Ինքը Եւրոպան ցոյց տուեց, որ խաղաղ-դիպլոմատիսկան ճա-  
նապարհով անկարող են թիւրքահայերը լուծել այդ հարցը և, ան-  
տեղեակ հայ առանձնայատուկ և եղակի պայմաններին, մի  
տեսակ թելաղբում էին հային՝ զիմել միւս ազգերի գործ դրած  
միջոցներին... Եւ հայը սկսեց անալոգիական տակտիկով բողո-  
քել զէնքով պահանջել մարդկային իրաւունքներ... Դժբաղդա-  
բար Ռուսաստանին թոյլ չտուին 1878-ին ազատ ձեռներով  
գործել թիւրքահայերի հարցում: Ժամանակները փոխուցան և  
Ռուսիան իր ուշը կենդրոնացրեց Հեռաւոր Արևմելքի վրայ:  
Այդ օրից շատ նկատելի եղաւ և տեսակէտների փոփոխու-  
թիւնը հայերի նկատմամբ: Արտաքին գործերի մինխստու-  
թեան մէջ այդ նոր ընթացքը արտայայտութիւն գտաւ յանձին  
Լորանով-Ռոստովսկու, իսկ ներքին քաղաքականութեան մէջ  
իշխան Գոլիցինի և մի շարք իդէօլոգների, ինչպէս Սու-  
փորին, Վելչչկո և այլն: Հայ ազգը յայտարարուած էր ան-  
վստահելի մի տարր: Գրչի անխիղն սրիկաների զրաքար-  
տութիւնների համար բացուած էր լայն ասպարէզ՝ հայի անունը  
վայր ցցելու համար ուու հասարակութեան աշքում: յայտնի է  
որ «հայկական սեպարատիզմը», «Մեծ Հայաստան մինչև Շոս-  
տով Դոնի վրայ» և այլ ոտախօսութիւնները հայերի հասցէին,  
թունաւորում էին ոռուի ամբոխային հոգերանութիւնը, ատե-  
լի դարձնում հային: Թիւրքիան և թուրք տարրը ընդհա-  
կառակը գովարանում էին և արժանանում ամենամեծ  
վստահութիւնների: Կովկասի վարչութիւնը և մանաւանդ պո-  
լիցիան լցուեց մուսուլման տարրով: Գոլիցինեան ըեժիմի ցոյց  
տուած անվստահութիւնը զէպի հայ ազգը՝ այնքան հեռու գնաց,

որ փակուեցան հայոց ծխական դպրոցները, խլուեցան եկեղեցական կայքերը, կալուածներն ու գումարները, փակուեցան և կրծատուեցան լուսաւորութեան և մարդասիրութեան զանազան հաստատութիւնները... Այդ բոլորը տեսնում էր թուրքը, որ մինչ այդ հային համարում էր ռուսներից ամենահովանապուած ցեղը, թուրքը չէր մոռացել հայի ցոյց տուած ծառայութիւնները ռուս-թուրքական և ռուս-պարսկական պատերազմներում։ Մածուկ սրելով իր համիսլամական դաշոյնը՝ դարերով ատուած «շէկ գեավուրի» դէմ նա րոպէ էր սպասում նախ և առաջ իր դանակը փորձելու հայի շլինքի վրայ և իր միջից հեռացնելու այդ խոչընդուածը—Եթէ թուրք ովկիանոսի միջից, որ ձգուած է Զիւնաստանի արևմտեան սահմաններից մինչև Միջերկրականը, բնաջինջ անուեն հայ ազգաբնակութիւնից կազմուած կղզիները, այն ժամանակ կը ստացուի համարեա միապաղաղ իսլամ տարր, որի դէմ շատ դըժուար կը լինէր մարառել. քանի՞ տասնեակ տարիներ են հարկաւոր և ինչ հսկայական ջանքեր այդ թուրքական ովկիանի մէջ ռուս գաղթականներ հաստատելու, որոնք լինէին նեցուկ ռուսական տիրապետութեան... Ուրեմն, հայի բնաջնջումով ոչ միայն Թիւրքիան էր ազատում եւրոպական պետութիւնների դիպլոմատիական միջամտութիւններից ինչ-որ հայերի պատճառով, այլև Կովկասի թուրք համիսլամութիւնը դառնուած էր երեք նահանգների (Բագուի, Գանձակի և Երևանի) միակ տէրը, մի պատրաստի բանակ թիւրքիական առաջխաղութեան ժամանակ։ Այլև թուրք ազգաբնակութիւնը բաժան-բաժան չէր լինելու նրանց մէջ խան ապրող հայերի շնորհիւ... Ահա հայերին կոտորելու նշանակութիւնը համիսլամութեան տեսակետից. թուրքը չի ուզում որ իր մէջ և իր թիւրքին մնայ հայ տարրը, որ երբեք չի ուզենալ վերադառնալ այն կացութեան, որի մէջ էր նա 75 տարի առաջ Անդրկովկասում. և, բնականաբար, կատաղի կերպով կռուելու է թուրքերի դէմ, երբ պարզուի համիսլամութեան ծրագիրը։ Այդ շատ լաւ գիտեն թուրք զեկավարները, որ պէտք է խոստովանել շատ ճարպիկ տակադիկներ են... Ահա հայերին կոտորելու համիսլամական նպատակը ժամանակի հարցին։

Սկսում է ռուս-ճապոնական պատերազմը, ռուսաց դէնքի անաջնողութիւնը լքցնում է համիսլամականների սիրտը վլստահութեամբ. կարգացէք «Հէյյաթի» № 12-ում պարզաբանութիւնները այդ մասին... Համիսլամական ծրագրերի իրագործան ժամը հասած է համարուում։ Պէտք է սկսէին հայերից, որ մի անգամ ընդմիշտ աղատէին իրանց ոճագործ ձեռները աւելի հզօր թշնամու դէմ կռուելու համար... Մոմենտը չափազանց

նպաստաւոր էր և այն կողմից, որ դեռ չէր փոխուած գոլիցի-նեան աղմինիստրացիան և պոլիցիան, որ կուրօրէն թրքասէր էր և անսահման հայատեաց... Կովկասի Փոխարքան կարձ մի-ջոցում չէր կարող նոր մարդկանցով փոխարինել հին բեժիմի ներկայացուցիչներին: Թուրք պոլիցիայի և թրքասէր աղմինիստրացիայի շնորհիւ համիսլամականները կարողացել էին ոչ միայն լաւ զինուել, այլև կազմակերպուել Սկսում է առաջին փորձը Բագւում: Հետեանքները հիանալի են. պոլիցիան և զօրքը արագ և կտրուկ միջոցներ ձեռք չեն առնում. կարելի է ազատ սպանել հային, այրել նրա տունն ու տեղը, թալանել նրա ունեցած չունեցածը: Ոչ մի յանցաւոր չպատժուեց մինչև օրս: Հայերը յանկարծակիի եկած՝ չին սպասում իրանց «եղբայր» թուրքերից այդպիսի նամարդութիւն: Հնարուեց «զէյթան» բացատրութիւնը, սենտիմենտալ ճառեր արտասանուեցան, կա-տակերգական թափօրներ կազմակերպուեցան: Համիսլամական-ները համոզուեցան, որ հայը դեռ ևս չի ըմբռնում բանի էու-թիւնը, իսկ կառավարութիւնը զբաղուած Հեռաւոր Արևելքի պատերազմով. առանձին՝ կարեռութիւն չի տալիս «հայ-թուրքական ընդհարումներին»... Սպանուող, թալանուող, ընաշխնջ եղող հային առաջարկում էր «հաշտուել» նախայարձակ ոճրա-դործների հետ: Հայերին մնում էր կամ ոչխարների պէս մոր-թոտուել թուրքերի ձեռքով, կամ ինքնապաշտպանութեան դի-մել այդ անհաւասար կառում... Թաջալերուած հագուի դէպերից, համիսլամականները աւելի մեծ ծաւալ տուին իրանց ապստամբ գործունէութեան, պահպաններով նոյն տակաիկան. նախ և առաջ մէջտեղից վերացնել իրանց նողատակներին խոչընդու կազմող հայ տարրը: Շուշուայ և Զանգեզուրի գաւառներում թուրքը պատերազմ է յայտարարում հայութեան: Գործադրում է կուռե-լու այն ձեւ, որ յատուկ էր նրա պապերին, ինչպէս տեսանք յօդուածիս սկզբում: Այդցեղական առհաւութիւնը՝ (ատավիզմը) շատ բնորոշ է: Դանձակի գաւառապետ Մէուտի խօսքերը, 75 տա-րուած ընթացքում «Կովկասի խաղաղացման» պատմութիւնը, գա-տաստանական անթիւ անհամար գործները, միթէ մի կաթիլ կաս-կած են թողնում, որ մարդասպանութիւնը, աւազակութիւնը, հրկիզութիւնը և թալանը նոյնքան յատուկ է թուրքին, որքան յափշտակութիւնը գայլին...

Ով ծանօթ է թուրք-թաթարական ցեղերի հետ, նա գի-տէ, որ դրանց մէջ ադրբէյջանները<sup>1)</sup> մի եղակի տեղ են բռնում:

<sup>1)</sup> Անդրկովկասի և Ատրպատականի թուրքերը իրանց լեզուով և էթ-նոգրաֆիական մի քանի կողմերով աւելի են տարբերում օսմաններից,

Աղբբէջանները պարսկական նախկին և այժմեան երկրներում հաստատուած թուրքերն են, որոնք երկար զարերի ընթացքում, բռնութեամբ խառնելով իրանց արեան հետ զանազան կովկասեան ցեղեր, իրանց ֆիզիքական տիպով ալժմ տարբերուած են միւս թաթարական ցեղերից: Այդ աղբբէջանները կամ կովկասեան թուրքերը շիա կրօնի ամենամոլեռանդ ներկայացուցիչներն են. անհամբերողութիւնը դէպի բըհստաննեան նրանց մէջ այնքան ծայրայեղ է, որ աղբբէջանը պիղծ է համարում ամեն առարկայ, որին դիպում է գքեափիրը... Ֆարսը կամ իսկական պարսիկը, որ իր ծագումով արիական ցեղից է, աւելի հակուած է դէպի իսլամական այն աղանդները, որոնք մարդասէր և հեզ բնաւորութիւն ունին, օրինակ, դէպի բարիականութիւնը... իսկ աղբբէջանը ամենաֆանաափակոս շիա է: Շիաների մոլեսանդութեան դէպիկը բաւական տեսանք նախճաւանի, Զանգեզուրի և Զիբոյիլի գաւառներում տեղի ունեցած արիւնուա անցքերի ժամանակ: Այստեղ առաջ բերել այն, ինչ յայտնի է ամեն մի ընթերցողին լրագրներից, աւելորդ կը լինէր...

Այդպիսով համիսլամականութիւնը երեք թուրք-հայկական նահանգների շիա աղբբէջանների մէջ գտնում էր մի պատրաստ բանակ և կարող էր փառաւոր կերպով իրադործել պանթիւրիզմի ծրագրի առաջն մասը, այսինքն՝ հայերի բնաջընջումը: Միւս նահանգներուած, որոնց մէջ սիւննիներն են տարածուած, այդ շարժումը գեր շօշափելի ձևեր չի ստացել մասամբ այն պատճառով որ այն տեղերում թուրքը թոյլ է հայերի համեմատութեամբ: Անզուշտ այդ տեղերում ևս շարժման բռնկումն միայն ժամանակի հարց է: Հայերին կոտորելով և թալանելով թուրք համիսլամականները գործնականապէս աւելի ու աւելի են կազմակերպուում և արդէն այնքան են առաջ գնացել իրանց յանդքնութեան մէջ, որ տեղ տեղ զինուած դիմադրութիւն են ցոյց տալիս ուսու զօրքերին: Մեր ասածներից պարզ է, որ հայերին բնաջնջ անելը մտնում է թուրք համիսլամականների ծրագրի մէջ և շատ հասկանալի է նրանց տակտիկայի տեսակէտից:

Կայ մի այլ պատճառ ևս, որով հայերի կոտորածը Անդրկովկասում նպատակայարմար է համիսլամականների տեսակէտից: Թիւրքիան համարում է համիսլամականների իդէալը, ապագայի յոյսը, նա է, որ պէտք է միացնի բոլոր իսլամներին

քան մալօրոսները՝ բուն ուստաներից. ուստի աւելի ցիշտ կը լինէր դրանց համարել թուրքական ընտանիքի առանձին ցեղ, որին կարելի է տալ աղբէյշան անունը:

և «զար-ուշ իսլամը» ընդարձակի։ Արդ, քանի որ Թիւրքիայում գործում է հայ բողոքող մի քրիստոնեայ տարր, որ եւրոպական քաղաքակրթութեան հիմքերով է ուղում վերանորոգել իսլամական րեժիմը, քանի որ կայ այդ տարրը, որի պատճառով եւրոպական մեծ պետութիւնները խառնում են Թիւրքիայի ներքին գործերում վտանգուած է համարում օսմանեան սուլթան-ների գահը։ Եթէ բնաշինջ անուի կամ quantité negligeable զարձնուի հայութիւնը Թիւրքիայում—այդ իսլամ առաջնակարգ պետութեան ներքուստ վտանգ չի սպառնալ Փոքր-Ասիայում։ Եթէ համիսլամականները անէծք են թափում և սպառնալից ատամներ կրծատում ապստամբ արաբների դէմ, միթէ նրանք հաշտ աչքով կը նայէին հայ յեղափոխական շարժումների վրայ։ Փետրուարի արիմուտ անցըերից յետոյ, թուրք «ինտելիգենտները» և ազգեցիկ բուրժուազիան Բագւում բացարձակ կերպով իրանց թշնամութիւնը դէպի հայերը պատճառարանում էին հայ կոմիտեաների գործունէութեամբ Թիւրքիայում։ Դրանց կարծիքով օսմանների տիրապետութեան դէմ գործող այդ կոմիտեաները իրանց նիւթական և բարոյական ոյժը գտնում են կովկասում։ ուրեմն, ջախջախնելով տեղիս հայերին նիւթականապէս և Փիղիկապէս՝ նպաստում են Թիւրքիային, հետևապէս, ծառայում են և համիսլամական նպաստակներին... Թէ ինչ գաղանային վրէժինդրութեամբ են լցուած դէպի հայութիւնը շիա-թուրքերը՝ այդ մենք տեսնում ենք ահա 8 ամիս Բագւում, Նախճաւանի, Շարուրի, Զանդեղուրի և Զիրքայիլի գաւառներում, կարդում ենք «Կասպի» և «Հէյաթ» թերթերի թունաւոր տողերի մէջ։ Այժմ մեզ ուղարկուած է մի գրաւոր վկայաթուղթ ևս, որ կասկած չի թողնում մեր վերև ասածների մասին։ «Իթթիհաթ» («Միութիւն») կոչուած մուսուլման ընկերութիւնը հրատարակել է մի «պատասխան» ուղղուած հայերին (ուստերէն լեզուով), որի մէջ կարդում ենք հետևեալ ճիւազային մտքերն ու զգացմունքները։

Անելով եւրոպական և ասիական մուսաստանի և Պարսկաստանի ու Թիւրքիայի սահմանակից տեղերի մեր հաւատակիցների ձայնը,—ասուած է «Իթթիհաթ» ընկերութեան այդ կոչի մէջ, —մենք մուսուլմաններս յայտնում ենք հայերին հետևեալը։ Անյշատակ ժամանակներից մուսուլմանները ապրում են հայերի հետ ձեռք-ձեռքի տուած և համակենցագի ամբողջ ընթացքում մուսուլմանները աւելի ուժեղ են եղել հայերից և իրեկ ուժեղներ՝ հովանաւորել են հայերին, ինչպէս թոյերին։ Դիմելով նորագոյն պատմութեան, մենք տեսնում ենք նոյնը։ Սակայն իսլամի ամբողջ պատմութեան մէջ զոք չեք կարող բերել հայերի շնորհակալութեան մի օրինակ մուսուլմաններց այն բարինների գիմաց, որ մուսուլմանները ցոյց են տուել նրանց շատ դարերից ընթացքում Զնայած զրան մուսուլման թագաւորները շարունակել են շնորհներ ցոյց առ հայերից, մինչդեռ նրանք կարող էին բնաշինջ անել ամբողջ Հայաստանը մի շաբաթում, դրա փոխարէն դուք

միշտ հոգածին միայն գլաս էք պատճառել, նրա անհաշտ թշնամին հանդիպանալով: Դեռ 1098 թ. յունիսի 2-ին, այսինքն աւելի քան 800 տարի առաջ, մուսուլմաններից բարերարուած մի հայ, երեսանց ընդունելով իսլամը, դաւաճանեց նրանց և մատնեց Անտիօք քաղաքի ամրութիւնների յատկագիծը պաշարուի խաչակիրներին: Գործողութեան այդպիսի եղանակի էիք հետեւում զուք մուսուլմանների նկատմամբ ձեր անփառունակ պատմութեան ամբողջ ընթացքում, մինչև մեր օրերը: Յիշենք ձեր վարմունքը վերջին երկու դարերի ընթացքում բոլոր պատերազմներում որ վարել են մուսուլման պետութիւնները<sup>1)</sup>: Չնայած ձեր անվերջ դաւաճանութիւններին, ձեր ու ապերախտութեան գէպի մուսուլմանները, զուք միշտ օգտուել էք մուսուլման վեհապետների բարձր հովանաւորութիւնից և օգտուելով ամեն տեսակ արտօնութիւններով զուք չափազանց հարստացաք և... չաղացաք, յեսոյ հարպեց սկսեցիր կատաղել և զէնք բարձրացըիք ձեր բարերաշների գէմ: Նոյն է ձեր վերաբերմունքը զէպի Ռուսաստանը, որ Մեծն Պետրոսի օրերից ձեռք տուել է աղջային և անտեսական զարգացման բոլոր միջոցները: Այժմ դուք կորցնելով ձեր խելքը, կորդացած մի քանի անպաշտպան շնորհվելիների աշող սպանութիւններով անկիմի յետելից, ոտի էք կանգնել Անդրկովկասի մուսուլմանների զէմ, որոնցից զուք լաւից բացի ոչինչ չէք տեսելու Ձեր բոլոր պատրաստութիւնները օսմանցիների և քրդերի գէմ կռուելու հայմար, ձեր աղատազրական շարժման օրից սկսած կատարուելու են մեր (2) ձեռքով: մուսուլման կոնտրաբանդիստներն են Պարսկաստան և Թիւքքիա փոխարքել աղատական պաշարների և կռուելու ամեն տեսակ միջոցների անհամար բանակութիւնը, արգելուած հրատարակութիւնների և կոչերի ամբողջ հակեր. իսկ ձեր անմոռութիւնը այսեղ է հասել, ու այդ զէնքը զուք բարձրացըրել էք մեր՝ մուսուլմաններիս զէմ: ահա թէ ինչպէս շնորհակալ եղաք մեզանից:

Ձեզ ենք ուղղում մեր բարի խօսքը, ձեզ—զանազան կոմիտեների անդամներ: Իմացէք, որ ձեր վարմունքը զայրացըրել է ամբողջ մուսուլման աշխարհը և, եթէ դուք խելքի չպաք, կը կործանէք վերջնականապէս ձեր աշխատասուէք ժողովուրդը:

Իմացէք, որ ծիծաղելի կը լինէր, եթէ՝ 400 միլիոն մուսուլմաններ վախենային մի բուռն հայերից, որոնք ցրուած են ամբողջ երկրագնդի՝ վրայ: Դուք աղատ ուղարկում էք ձեր սպանական նամակները ձեր ընտրած մուսուլմաններին, որովհետև նրանք չեն ծածկւում՝ դանազան կոմիտեների վարպեյների ետելք: իսկ մենք չենք ճանաչում ձեզ, հայ յեղափոխականներ, այդ պատճառով այսուհետեւ մենք յեղափոխական ենք համարելու: ամեն մի հայի արական սերից, սկսած տասնեկինդ տարեկանից մինչև 70 տարեկանը և ամեն անգամ երբ զուք մեր նկատմամբ թշնամական քայլ անէք, անինայ կոստորեկու ենք ձեզ բոլոր երկրագնդի երեսին, ուր և հայր պատահի մուսուլմաններին: արևելքում թէ արևմտաքում, հիւսիսում թէ հարաւում, քաղաքում թէ փեղում, սարի վրայ թէ դաշտում, անտառում թէ անապատում, գետի վրայ թէ ծովի վրայ...»

Բացարութիւնները աւելորդ են...

Մեզ ասում են թէ ինչո՞ւ մինչև օրս, ոսւսական տիրապետութեան ժամանակ, Կովկասում տեղի չեն ունեցել վերջին դէպքերի նման արիւնոտ անցըեր: Ճիշտ է, այդ չափով և ծա-

1) Ակնարկ ուսւա-պարսկական և ռուս-թրքական պատերազմների վրայ:

ւալով ընդհարումներ չեն եղել. թէս սպանութիւնները, աւազակութիւնները, գողութիւնները և թալանը անպակաս են պահել հայի գլխից նրա թուրք հարեանները. այդ կը վկայի իւրաքանչիւր դաւառացի հայ: Զպէտք է այն էլ մոռանալ, որ միշտ, երբ ոռուսի գլուխը խառն է եղել արտաքին պատերազմներով, մուտուլման տարրը կովկասում շարժուել է, հակաքրիստոնէական և հակապետական ցոյցեր արել: Զպէտք է մոռանալ և այն, որ մինչև Դոլցինեան ընծիմը հայի անձի, գոյքի և պատուի պաշտպանութեան հարցը թուրքերի աշջում որևէ կասկածից դուրս էր: Եւ միայն տեղական վարչութեան անգործութիւնը կոտրածների հէնց սկզբում, արգելքը որ զինուորները կրակ արձակեն՝ հայերին սպանող-հրկիզողների և թալանողների վրայ—թուրք ամբոխի աշջում համահաւասար եղաւ խրախոյսի: Զարագործները տեսան, որ ոչ մի պատիժ չի սպանում մասսային սպանութիւնների, հրկիզումների և թալանի համար: Մըթէ դա բաւականաչափ դրդիչ հանգամանք չէր աւազակաբարոյ թուրք ամբոխի համար: Բոլոր այն ոռուս անաշխառ մարդիկը, որոնք իրանց մատերը դրել են մեր այդ սոսկալի իրականութեան վէրբերի վրայ, պ. պ. Սեօմին, Խամենտովկիլի, Սենակիչ և Նանդ, անթիւ ապացոյցներ են ըերում տեղական իշխանութիւնների յանցաւոր անգործութեան մասին թրքական խժդութիւնների ժամանակ: Զորս ամիս է անցել Նախճաւանի և Շարուրի գաւառներում տեղի ունեցած քստմնելի դէպքերից յետոյ, 50 ից աւելի հայ գիւղեր են աւերուած. յայտնի են թէ որ թուրք գիւղերն են յարձակում գործել, ովքե՞ր են գլխաւոր ոճարագործները, սակայն պատժի և մասանների հատուցման մասին դեռ ևս ոչինչ չի լսւում: Դժուար չէ գուշակել թէ ինչ բացատրութիւններ պէտք է տար թուրքը այդչափ ներողամիտ և թոյլ վերաբերմունքին: Եւ ահա փետրուարի և մայիսի արիւնութայ օրերից յետոյ եկան օգոստոսեան սկ օրերը Շուշիի և Զանգեզուրի համար, Սոորու և Գոմորի կործանումը տեսաւ Բագուն իր համաշխարհային արդիւնագործութեամբ, Նախճաւանի գաւառում դեռ շարունակ ւում են սպանութիւնները և թալանը... Ի՞նչ անել այդ եղեռնագործութիւններին վերջ դնելու համար:

1) Նախ և առաջ պէտք է, որ թէ իշխանութիւնը և թէ հայ ժողովուրդը լաւ ըմբռնեն թուրք-թաթարական շարժման նպատակը, ինչպէս և համիսլամականների կողմից գործադրուող տակտիկան, և ձեռք ձեռքի տուած կոռուեն քաղաքակրթութեան այդ կատաղի թշնամիների դէմ:

2) Հայ ազգաբնակութեան անհրաժեշտ է վստահաբար ինք-

նապաշտպանութեան լայն միջոցներ տալ, որովհետև Ալէքսանդրապոլի, Ախալքալաքի, Նոր-Բայազէթի և Թիֆլիսի գաւառներում, ուր հայ տարրը ուժեղ է թուրքերից, ինչպէս և բոլոր կուհներում, ապացուցեց հայը, որ նա երբէք նախայարձակ չի լինում, այլ միմիայն պաշտպանում է թուրքերից:

3) Պէտք է իսկոյն և եթ հեռացնել բոլոր թուրք պղլիցիականներէն յիշած երեք նահանգներում, ուր գրանք զինաթափ են անում հայերին, զինում իրանց հաւատակիցներին և մասնակցում կոտորածներին, թալանին և բռնութիւններին:

4) Խիստ և արագ դատաստան նախայարձակողների համար և տուգանք վասառածների օգտին, ի հաշիւ նախայարձակ՝ հասարակութիւնների: Ծիծաղելի է «պարագլուխներ» որոնել պատժելու համար, երբ յայտնի է թէ՛ որ թուրք գիւղերի հասարակութիւններն են յարձակում գործել, սպանութիւններ արել հրկիզել, թալանել, բռնութիւններ կատարել Այնտեղ, ուր հազարաւոր են եղել յարձակուղները, ի՞նչ փնտռել անհատներին... Այդ տեսակ վերաբերմումքը միայն կարող է նպաստել մասսային ոճրագործութիւնների տարածման: Ռուսական տիրապետութիւնը կովկասում հաստատուեց հչ այդ սիստեմով...

Այժմ երբ պէտք է հրդեհը հանգցնելու մասին մտածել, իշխարկէ ժամանակը չէ խօսել այլ միջոցների մասին, որոնք կապուած են պետական ընդհանուր կարգերի և բեժիմի փոփոխութեան հետ: Ամեն բոպէն տանում է հազարաւոր կեանքեր, ամբողջ սերունդների ըրտինք աշխատանքով յետ գցուած նիւթական միջոցներ: Սով և ամայութիւն է սպառնում բազմաթիւ գաւառներին: Տատանումները, կարճատես և թոյլ վերաբերմունքը միայն նորանոր առաւելութիւններ են տալիս ապաստամբների ձեռքը...».

L. U.

6 Մեպտ.

1874 Թուի յունուարի 19-ին Բարձրագոյն հաստատուած կանոններ, որոնք նախապէս հաւատնութիւն են դատի Մեծ Խիստ կովկասեան Փոխարքայի կողմից

1) Համաձայն օրէնքների ժողովածուի Ա1 հատորի, 1 մասի, 975-դ յօդուածին, հայ-լուսաւորչական հովեռականութեան պարտաւորութիւնն է մասնաւոր հիմնել եկեղեցական դպրոցներ և նրանց վարել, նոյնպէս և հոգացողութիւնն՝ մտցնելու դասա-